«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/135

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2025 թ. N 135
«ԲԵՐԴԻ ԲԱԶՄԱԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ **«Բերդի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ**
Գործունեության հասցեն՝ **ՀՀ, Տավուշի մարզ, ք. Բերդ, Թեհլերյան 43**
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Բերդ, Սայաթ Նովա 2/1
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի հունիսի 11-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Բերդի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԲԲՊՔ, ՄՈՒՀ, Քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 12 փետրվարի 2024թ.
2-րդ վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 12 օգոստոսի 2024թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 04-06-ը նոյեմբերի 2024թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 24 փետրվարի 2025թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝ 03 ապրիլի 2025թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Նարինե Միրականյան՝** մանկավարժական գիտությունների թեկնածու, ՀՀ ԿԳՄՄՆ «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի Ուսուցիչների մասնագիտական զարգացման բաժնի պետ, փորձագիտական խմբի ղեկավար:
- **Նաիրա Արշակյան՝** Երևանի պետական բժշկական համալսարանի ֆարմակոգնոզիայի ամբիոնի դասախոս, փորձագիտական խմբի անդամ:
- **Ելենա Մարտիրոսյան՝** Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, փորձագիտական խմբի անդամ:
- **Ալբերտ Թադևոսյան՝** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ֆինանսներ» բաժնի 2-րդ կուրսի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող-փորձագետ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:
Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Բավարարում է
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

I. **Քոլեջն ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում:**

Քոլեջում իրականացվող կրթական ծրագրերը հիմնականում արտացոլում են տեղական և տարածքային աշխատաշուկայի կարիքները՝ ներառյալ դուալ կրթության սկզբունքով իրականացվող մասնագիտությունները: Խորհուրդ է տրվում ապահովել կրթական ծրագրերի պարբերական և տվյալահենք վերանայում՝ հիմնված աշխատաշուկայի պահանջների վերլուծության վրա: Դասախոսական կազմն ընդհանուր առմամբ բավարարում է ծրագրերի պահանջներին, սակայն անհրաժեշտ է ձևավորել կարիքների գնահատման վրա հիմնված վերապատրաստման համակարգ, ներդնել դասախոսների աշխատանքի գնահատման գործնական

մեխանիզմներ և ամրապնդել գործատու-դասախոսների մասնակցությունն ուսումնական գործընթացին: Անհրաժեշտ է ձևավորել ռեսուրսների պլանավորման և բաշխման ռազմավարական մոտեցում՝ այն կապելով կրթական ծրագրերի նպատակների և ուսումնառության վերջնարդյունքների հետ, ինչպես նաև իրականացնել գրադարանի թվայնացումը և համալրել գրականությունը նոր և բազմալեզու նյութերով՝ ներառյալ մասնագիտական աղբյուրներ:

II. Ռազմավարական կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, առկա են բարելավման ուղղություններ՝ ապահովելու արդյունահենք կառավարում:

Քոլեջում ձևավորված են գործող կառավարման կառուցվածք և որոշումների կայացման հիմնական ընթացակարգեր, որոնք ապահովում են հաստատության առօրյա աշխատանքը: Միավորված քոլեջների ինտեգրման արդյունքում վերջին տարիներին իրականացվել են կարևոր քայլեր՝ կառավարման մարմինների համագործակցության և գործառույթների համադրման ուղղությամբ: Կառավարման համակարգի զարգացման հաջորդ փուլում նպատակահարմար է ուշադրությունը կենտրոնացնել դրա օպտիմալացման վրա, ինչը կբարձրացնի արդյունավետությունը և կխթանի ռեսուրսների նպատակային օգտագործումը: Այդ նպատակով անհրաժեշտ է.

- հայտնաբերել և վերացնել ոչ արդյունավետ գործառույթները,
- ամրապնդել կառավարման գործընթացների ներդաշնակությունը,
- ներդնել տվյալների հավաքագրման և վերլուծության միասնական մեխանիզմներ,
- հստակեցնել պատասխանատվության սահմաններն ու դերաբաշխումը բոլոր մակարդակներում:

III. Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը:

Քոլեջի հետազոտական, միջազգայնացման և արտաքին կապերի ուղղություններով առկա է զգալի ներուժ, սակայն դրանց զարգացումը պահանջում է հստակ ինստիտուցիոնալ մոտեցում: Խորհուրդ է տրվում ձևավորել հետազոտական և միջազգայնացման քաղաքականություն՝ խթանելով դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը, օտար լեզվի ուսուցումը և միջազգային ծրագրերին մասնակցությունը: Արտաքին շահակիցների հետ հետադարձ կապը նպատակահարմար է կազմակերպել պարբերաբար և տվյալների վրա հիմնված ձևով, որպեսզի այն կարողանա իրական ազդեցություն ունենալ քոլեջում ընդունվող որոշումների վրա:

4. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման քոլեջի կողմից ներկայացված ծրագիրն իրատեսական է, ռիսկեր չի պարունակում: Իրականացման դեպքում կբերի որակական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Բերդի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 (չորս) տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել Քոլեջի Կառավարման խորհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով I, II և III կետերում նշված խնդիրների

առաջնահերթ լուծմանն ուղղված գործողությունները՝ ապահովելով հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան մեխանիզմներ:

3. Կազմակերպել բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտ մինչև հաջորդ հավատարմագրման ժամկետը:
4. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարին մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել քոլեջի կառավարման խորհրդում:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Քոլեջի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Վ. Գաբրիելյան**

2025 թ., հունիսի 11